

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՃԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԱՆԿԱԽԱՅՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Հայաստանի անկախացումը հասարակության մեջ զգալի փոփոխություններ առաջացրեց, որն իր ազդեցությունը թողեց նաև բնակչության ժողովրդագրական գործընթացների վրա:

Ինչպես ցույց են տալիս խորհրդային տարիներին անցկացված մարդահամարների արդյունքները, Հայաստանի Հանրապետության բնակչությունը բնականոն աճ էր (տարեկան միջին աճը կազմում էր 1,5 %) արձանագրում: Այս ցուցանիշը բարձրերից մեկն էր Խորհրդային Միության հանրապետությունների մեջ:

Բնակչության բնական աճն այն կարևոր բաղադրիչներից է, որ ապահովում է հասարակության բնականոն զարգացման գործընթացը և հնարավորություն է տալիս դրա հիման վրա կատարել ռազմավարական կանխատեսումներ:¹ Այս առումով Հայաստանի անկախացումը, դրան նախորդած աղետալի երկրաշարժը, քաղաքական սրվող պայմանները՝ կապված Ղարաբաղյան շարժման հետ և դրան հաջորդած Ղարաբաղի ազատագրման համար մղված պատերազմն իրենց խորը կնիքը թողեցին ժողովրդագրական իրավիճակի վրա:

Այս ամենին հաջորդեցին Խորհրդային Միության փլուզումը, տնտեսական կայության խզումը, օրեցօր վատացող սոցիալ-տնտեսական պայմանները, գործազրկությունը, որոնց արդյունքում 1991-1993թթ. թափ առած զանգվածային արտագաղթը զգալիորեն փոխեց հանրապետության ժողովրդագրական պատկերը:

Այսպես, անցյալ դարի 80-ական թթ. Խորհրդային Հայաստանում բնական աճի տեմպերը համեմատաբար կայուն էին: Ըստ 1985թ. վիճակագրական տվյալների Հայաստանում ծնվել է 80306 երեխա, մահացել է 19581 մարդ, բնական աճը կազմել է 60725 մարդ:² 1986թ. հանրապետությունում գրանցվել է 81192 ծնունդ,³ իսկ 1987՝ 78492 ծնունդ:⁴ 1988թ. հանրապետությունում գրանցվել էր 74707 ծնունդ և 35567 մահացության դեպք:⁵ Մահացության կտրուկ ավելացումը 1988թ. կապված էր երկրաշարժի հետևանքների հետ, որն էլ հանգեցրել էր բնակչության բնական աճի նվազման: Ըստ ոչ պաշտոնական տվյալների՝ աղետալի երկրաշարժին զոհ գնաց 55 հազ. մարդ:⁶

1989թ. հանրապետությունում ծնվել է 75250 մարդ, մահացել՝ 20853: Բնական աճը կազմել է 54397 մարդ:⁷ 1990թ. ծնված երեխաների թիվը հանրապետությունում կազմել էր 79882, մահացածներինը՝ 21993 մարդ, իսկ 1991թ. համապատասխանաբար՝ 77825 և 23425 մարդ, բնական աճը կազմել է 54440 մարդ:

Այսպիսով, համադրելով բնակչության բնական աճի 6-ամյա տվյալները, տեսնում ենք, որ բնական աճի ցուցանիշները համեմատաբար բարձր ու կայուն են եղել և այս տեմպերով շարունակվելու դեպքում ՀՀ բնակչության թվաքանակն այսօր կարող էր բավականին բարձր լինել:

Բնական աճի այս ցուցանիշը կտրուկ փոփոխվում է անկախության առաջին տարիներից սկսած: Պատճառներից են՝ սոցիալ-տնտեսական վիճակի վատթարացումները, աղետալի երկրաշարժը և թափ առած Ղարաբաղի ազատագրական պատերազմը:

Նվազման ցուցանիշը 1992թ. արդեն ցույց էր տալիս, որ հետագա տարիներին այդ երևույթը շարունակվելու է և լինելու է բնական աճի նվազում: Այդ տարում հանրա-

¹ В. Б о р и с о в , Демография, М., 1999, һ.ծ. 71.

² Армения в цифрах в 1985 году, ЦСУ Арм. ССР, Ер., 1986, һ.ծ. 21.

³ Армения в цифрах в 1986 году, ЦСУ Арм. ССР, Ер., 1987, һ.ծ. 18.

⁴ Армения в цифрах в 1987 году, Госкомстат Арм. ССР, Ер., 1988, һ.ծ. 20.

⁵ Армения в цифрах в 1988 году, Госкомстат Арм. ССР, Ер., 1989, һ.ծ. 23.

⁶ Novosti, Liasion Agency, Wasington, 1995:

⁷ Հայկական ԽՍՀ ժողովրդական տնտեսությունը 1989թ., Վիճակագրական տարեգիրք, ՀՀ Վիճակագրություն, Եր., 1991:

պետությունում բոլոր ծնվածները կազմում էին 70581 մարդ, իսկ մահացածները՝ 25824, բնական աճը՝ 44757 մարդ:⁸

Աղյուսակ 1. ՀՀ բնակչության բնական աճի ցուցանիշները 1985-1991թթ.

Տարի	Ծնելիություն	Մահացություն	Բնական աճ
1985	80306	19581	60725
1986	81192	-	-
1987	78492	-	-
1988	74707	39140	39140
1989	75250	54397	54397
1990	79882	57889	57889
1991	77825	54440	54440

1993թ. անկախ հանրապետության սոցիալ-տնտեսական դժվարին ժամանակահատվածում, ըստ ընթացիկ հաշվառումների, ծնունդների թիվը զգալի նվազել էր՝ հասնելով 59041-ի, իսկ մահացածներինը՝ 27500 մարդ: Մահացության թվի այսպիսի ցուցանիշը արդյունք էր նաև Դարաբաղում և Հայաստանի սահմանամերձ շրջաններում տեղի ունեցած ռազմական գործողությունների: Այս պարագայում բնական աճը կազմել էր 31541 մարդ: 1994թ. վիճակագրական տվյալներով՝ ծնվածների քանակը կազմել է 51143 մարդ, իսկ մահացածներինը՝ 24640 մարդ, բնական աճը կազմել է 25395 մարդ :

Անկախացման այս տարիները, որ բարդ ու դժվարին ժամանակահատված էին հանրապետության համար, ներկայացնում են հետևյալ համեմատական ցուցանիշները: Այսպես, դիտարկելով 1990թ. հանրապետությունում գրանցված ծնունդների քանակը, պետք է արձանագրել, որ այդ ցուցանիշը բարձր էր 1987-1989թթ. նույն ցուցանիշներից: 1991թ. ծնելիության անկում չի արձանագրվել, բայց հենց հաջորդ տարում՝ 1992թ. ծնելիության անկում է նկատվում, որը, համեմատած նախորդ տարվա նույն ցուցանիշի հետ, նվազել էր 10%-ով:

1993-1994թթ. ծնունդների թիվը կազմել է համապատասխանաբար՝ 59041 և 51143 մարդ: Այսինքն 1992թ. հետ համեմատ անկումը կազմել էր համապատասխանաբար 12 և 25 տոկոս: Այստեղ կարելի է նշել, որ 1992-1994 թվականները զանգվածային արտագաղթի ժամանակաշրջան են, և ծնունդների այսպիսի անկումը ուղիղ համեմատական էր արտագաղթողների թվին:

1995թ. բնակչության զանգվածային արտագաղթը որոշ չափով նվազեց: 1995-1996թթ. բնակչության բնական աճը մեծ անկում չունեցավ: Այսպես, 1995թ. ծնվածների թիվը կազմել է 48960 մարդ, մահացածներինը՝ 24842, բնական աճը՝ 24118 մարդ, իսկ 1996թ. համապատասխանաբար՝ 48134 և 24936, բնական աճը՝ 23158 մարդ:⁹ Եթե այս տվյալները համեմատելու լինենք 1991թ. հետ, ապա բնակչության բնական աճը 1995թ. նվազել է 2,2 անգամ, իսկ 1996թ.՝ 2,3 անգամ:

1997թ. ծնունդները եղել են 43929, իսկ մահացությունները՝ 23985, բնական աճը՝ 19944 մարդ: 1998թ. ունենք այսպիսի պատկեր. ծնունդներ՝ 39366, մահացություններ՝ 23410, բնական աճը՝ 16156 մարդ:¹⁰ 1999թ. ծնվել է 36502, մահացել 24087 մարդ, բնական աճը կազմել է 12415 մարդ: Իսկ 2000թ. այդ ցուցանիշը կազմեց 34276 և 24052, բնական աճը՝ 10251 մարդ:¹¹ 2001թ. շարունակվեց բնակչության թվի անկումը, ծնունդները հասան 32065 մարդու, իսկ մահացությունները՝ 24003, բնական աճը կազմեց 8062 մարդ :

Այսպիսով, XX դարի վերջին տասնամյակում, համեմատած նախորդ տասնամյակի հետ, բնական աճը կրճատվել է 5,3 անգամ: Բնակչության բնական աճի դինամիկան, սկսած 1992թ., արձանագրել է նվազելու միտում: Դա էլ իր հերթին կոնկրետ ազդել է բնակչության թվաքանակի փոփոխությունների վրա: Աղյուսակ 2-ից երևում է,

⁸ Հայաստանը թվերով 1992, Վիճակագրական համառոտ ժողովածու, ՀՀՎ, Եր., 1994:

⁹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1995-1996թթ., ՀՀ ՎՊՆ-ՎՆ, Եր., 1998, էջ 71:

¹⁰ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1997-1998, ՀՀ ԱՎԾ, Եր., 2001, էջ 114:

¹¹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1999-2000, ՀՀ ԱՎԾ, Եր., 2001, էջ 121:

որ ծնելիությունը տարեցտարի նվազել է՝ կապված ոչ միայն վերարտադրող հատվածի զգալի մասի բացակայության, այլև հանրապետության առկա սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակի հետ: Չնայած բնական աճի այսպիսի կտրուկ անկմանը՝ արձանագրենք, որ բնական աճը 10 տարվա կտրվածքով կազմել է 217443 մարդ, որը զգալիորեն զիջում է 1985-1991թթ. նույն տվյալներին:

Աղյուսակ 2. ՀՀ բնակչության աճի ցուցանիշները 1992-2001թթ.

Տարի	Ծնելիություն	Մահացություն	Բնական աճ
1992	70581	25824	44757
1993	59041	27500	31541
1994	51143	24652	26491
1995	48960	24842	24118
1996	48134	24936	23198
1997	43929	23985	19944
1998	39366	23210	16156
1999	36502	24087	12415
2000	34776	24025	10751
2001	32065	24003	8062
ընդամենը	413354	247064	217443

Բնակչության բնական աճի վրա իր անմիջական ազդեցությունն է թողել նաև արտագաղթը, որի հետևանքով Հայաստանից բացակայում է բնակչության ավելի քան մեկ քառորդը: Հանրապետությունում գրեթե երեք անգամ նվազել է ամուսնությունների քանակը: Հայկական ընտանիքը, որը մինչև 80-ական թթ. բաղկացած էր միջին հաշվով 4,7 մարդուց, այսօր նկատելի «փոքրացել է»՝ հասնելով 3,5-ի: Վերջին տասնամյակում սակավ են այն ընտանիքները, որտեղ երեխաների թիվը անցնում է երկուսից: Այս թվերը շատ մտահոգիչ են, պետությունը պետք է ժողովրդագրական քաղաքականություն մշակի: Այսօր շատ է խոսվում արտագաղթը մեղմելու մասին, որի գլխավոր նախապայմանն է համարվում տնտեսական աճի և կենսամակարդակի բարձրացումը: Սակայն ներկա պայմաններում ավելի հրատապ է կոնկրետ քայլեր ձեռնարկել ծննդաբերության բարձրացման ուղղությամբ, և որպեսզի առաջիկա տարիներին այն հասցվի տարեկան 45-50 հազարի, այդ նպատակով նոր կազմավորվող և կազմավորված ընտանիքներում պետք է ստեղծել աճի նորմալ պայմաններ: Մրան հասնելու համար պետք է էապես խրախուսել երիտասարդ ընտանիքներին, մասնավորապես սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման և յուրաքանչյուր ծնվող երեխայի դեպքում շոշափելի հատկացումներ կատարելու միջոցով: Այս միջոցառումների համալիր ծրագիրը Հայաստանում պետք է կազմվի և իրականացվի այսօր, հակառակ դեպքում այն կարող է նոր բացասական հետևանքներ ունենալ ժողովրդագրական հետագա իրավիճակի վրա:

ТЕНДЕНЦИИ ЕСТЕСТВЕННОГО ПРИРОСТА НАСЕЛЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ ПОСЛЕ НЕЗАВИСИМОСТИ

Резюме

А. Маркосян

После провозглашения независимости Армении естественный прирост населения резко сократился. Это было связано как с эмиграцией, так и тяжелой социально-экономической обстановкой. По сравнению с 1992 годом в 2001 году рождаемость снизилась почти 2,5 раза. Во избежание дальнейших негативных демографических последствий и улучшения положения необходимо создание системы поощрения естественного прироста населения, регулируемой государством